# ԱՍՏԾՈ ԿՐԱԿԸ
# THE FIRE OF GOD

**LUKE 12:49, HEB. 12:29**
**ՂՈՒԿԱՍ 12:49, ԵԲՐ. 12:29**

---

## ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ.

**(Ղուկաս 12:49, Եբր. 12:29)**

Ես եկա որ կրակ գցեմ երկրիս վրա. եւ ի՞նչքան եմ կամենում, որ արդէն իսկ բորբոքուած լինի:

Որովհետեւ մեր Աստուածը ոչնչացնող կրակ է:

Why did God choose the fire? When the fire of God comes it changes us. Fire in the natural is so miserable...

## I. ՀԱԼԵՑՆՈՂԻ ԿՐԱԿԸ
## REFINERS FIRE.

**This is where we become for what God has designed us to be.**

**Մաղ. 3:1-3 -** 1 ահա նա գալիս է, ասում է Զօրաց Տէրը: 2 Եւ ո՞վ կդիմանա նորա գալու օրուան, եւ ո՞վ է նորա երեվալու ժամանակին կանգնողը, որովհետեւ նա **հալեցնողի կրակի պէս է, եւ լուացարանների օճառի պէս**: 3 Եւ նա նստելու է իբրեւ **արծաթ հալեցնող եւ մաքրող.** կը մաքրի Ղեւիի որդիներին եւ կը հալեցնի նորանց ոսկու եւ արծաթի պէս. եւ նորանք կլինեն արդարութեամբ ընծա մատուցանողներ Տիրոջ համար:

**ՀԱԼԵՑՆՈՂԻ ԿՐԱԿՆ ՈՒՆԻ ՇԱՏ ՀՍՏԱԿ ՆՊԱՏԱԿ:**
**THE REFINERS FIRE HAS VERY SPECIFIC PURPOSE:**

1. **Այն հեռացնում է բոլոր անմաքրությունները և մաքրման աշխատանք է կատարում:**
   **It moves all the impurities, and does purification.**
2. **Այն այրում է մեղքի, անհավատության, վախի և բարկության ամրությունները:**
   **It will burn away the sin, unbelief, fear, anger, strongholds.**

   **Եբր. 12:1 -** 1 Ուրեմն մենք էլ, որ վկաների այսքան բազմութիւն ունինք մեզ շրջապատած, **դէն գցենք ամեն ծանրություն,** եւ մեզ պաշարող մեղքը. եւ համբերությամբ վազենք մեր առաջին դրած ասպարէզի ընթացքը.

3. **Մենք պետք է հրաժարվենք ցանկացած բանից, ինչը չի ներկայացնում Աստծո կրակը:**
   **We need to set aside anything that does not represent the fire of God.**

**Մի պահ կինը լուռ էր: Դրանից հետո նա հարցրեց արծաթագործին.**

**- Ինչի՞ց եք իմանում, որ արծաթը լիովին մաքրված է:**

**Նա ժպտաց և պատասխանեց.**

**- Դա ամենահեշտ բանն է. երբ ես տեսնում եմ իմ արտացոլքն արծաթի մեջ:**

**Հալեցնողի կրակը գիտի ճիշտ այն, ինչը պետք է մաքրված լինի:**

**1 Կոր. 10:13 -** 13 Ձեզ ուրիշ փորձութիւն չէ պատահել բացի մարդկային փորձութիւնից. բայց Աստուած հաւատարիմ է, որ չի թողիլ ձեզ ձեր կարողութիւնիցը վեր փորձուելու, այլ փորձութեան հետ ելքն էլ կպատրաստէ, որ կարողանաք համբերել:

4. **Հալեցնողի և Մաքրողի կրակը ճշգրտորեն գիտի, թե ի՝նչը պետք է այրվի:**
   **Refiners fire knows exactly what needs to be burned up.**

   Եթե այսօր դուք զգում եք կրակի ջերմությունը, հիշեք, որ Աստծո աչքը ձեզ վրա է, և Նա կպահի Իր ձեռքը ձեզ վրա և կհետևի ձեզ, մինչև որ տեսնի Իր պատկերը ձեզնում: Հալեցնողի և Մաքրողի կրակը ճշգրտորեն գիտի, թե ի՝նչը պետք է այրվի:

## II. ԱՐԹՆՈՒԹՅԱՆ ԿՐԱԿ
## REVIVAL FIRE.

Հունարեն «Արթնություն» բառը նշանակում է բորբոքել կամ կրկին վառել կրակը, որը դանդաղորեն մարում է, պահպանել այն ուժգնորեն այրվող վիճակում: Այս բառն օգտագործվում է փոխաբերական իմաստով, երբ Պողոս առաքյալը գրում էր Տիմոթեոսին. «Արծարծի՛ր (կամ՝ Բորբոքի՛ր) Աստծո շնորհքը (կամ՝ պարգևը), որը քեզնում է» (Բ Տիմոթեոս 1.6):

1. **Արթնության կրակն այն է, ինչից դուք ստանում եք եռանդ և իմանում եք ձեր նպատակը, որն Աստված որոշել է ձեզ համար:**
   **Revivals fire is where we get the passion and your purpose for what God has designed us to be.**

   ***Ղուկ. 4:18-19 -*** *18 Տիրոջ Հոգին ինձ վրա է. որի համար էլ օծեց ինձ. նա ինձ ուղարկել է աղքատներին աւետարանելու, սրտով կոտրուածներին բժշկելու,*
   *19 Գերիներին թողություն քարոզելու, եւ կույրերին տեսություն. խոցուածներին արձակելու ազատելով, Տիրոջ ընդունելի տարին քարոզելու:*

2. **Արթնության կրակը՝ ընթացք է:**
   **The revivals fire is a process.**

   - Հենց սա կատարվեց Նինվե քաղաքում, որն ապաշխարեց Հովնանի քարոզից, ով հայտարարեց. «Եվս քառասուն օր, և Նինվեն կկործանվի»:

**Հովն. 3:5-10 -** 5 Եւ Նինուէի մարդիկ հավատացին Աստուծուն, **եւ ծոմ**
**հրատարակեցին** եւ քուրձեր հագան մեծերից մինչեւ պզտիկները:
6 Եւ խօսքը հասավ Նինուէի թագավորին, եւ նա վեր կացավ իր աթոռից եւ հանեց
պատմուճանը իր վրայից եւ քուրձ հագավ եւ նստեց մոխրի վրա. 7 Եւ կանչեց ու
ասեց Նինուէում թագավորի եւ նորա մեծամեծների հրամանով ասելով. Մարդ եւ
անասուն, արջառ եւ ոչխար ոչինչ չ'ճաշակեն, չ'արածեն եւ ջուր չ'խմեն. 8 Եւ քուրձ
հագնեն մարդիկ եւ անասունք, եւ **ուժով աղաղակեն առ Աստուած,** եւ ամեն մարդ
ետ դառնա իր չար ճանապարհից եւ իր ձեռքերում եղող անիրավութիւնից: 9 **Ով**
**գիտէ, գուցէ Աստուած ետ դառնա եւ զղջա,** եւ ետ դառնա իր սաստիկ
բարկութիւնից ու մենք չ'կորչենք:
10 Եւ Աստուած տեսավ նորանց գործերը, որ ետ դառան իրանց չար ճանապարհից,
եւ **Աստուած զղջաց** այն չարեաց մասին, որ ասել էր թէ պիտի անէ նորանց, եւ
չ'արավ:

- Նույնը կարելի է տեսնել Սամարիայի արթնության ժամանակ, որն առաջնորդում էր Փիլիպպոս ավետարանիչը (Գործք 8:5-8):

**Գործ. 8:5-9 -** 5 Եւ Փիլիպպոսն իջավ Սամարիայի մի քաղաքը՝ եւ Քրիստոսին
քարոզում էր նորանց: 6 Ժողովուրդներն էլ միաբան ականջ էին դնում Փիլիպպոսի
խօսածներին, լսելով եւ տեսնելով այն նշանները, որ անում էր: 7 Որովհետեւ պիղծ
ոգիներ ունեցողների շատերից, մեծաձայն աղաղակելով դուրս էին գալիս: 8 Եւ շատ
անդամալոյծներ եւ կաղեր բժշկվում էին: <u>Եւ մեծ ուրախութիւն եղավ այն քաղաքումը</u>:

3. **Արթնության կրակը սրբերի համար է:**
   **The revivals fire is for the saints.**
   **J. Edwin Orr said, “In times of evangelism, the evangelist seeks the sinner, in times of revival the sinners comes chasing after the Lord.”**

## III. ՀՈԳԵԳԱԼՍՏԻ ԿՐԱԿԸ
## PENTECOST FIRE.

1. **Հոգեգալստի կրակը կցնցի աշխարհը:**
   **Pentecost fire will shake the world.**

Գործ. 1:8 - 8 Բայց դուք զօրություն կ'առնէք՝ երբոր Հոգին ձեզ վրա կ'գայ, եւ
իմ վկաները կ'լինիք Երուսաղէմում եւ բոլոր Հրէաստանի եւ Սամարիայի մէջ
մինչեւ երկրի ծայրերը:

2. **Հոգեգալուստը եկեղեցու համար է:**
   **Pentecost is for the church.**

**Գործ. 2:1-4 -** 1 Եւ երբոր Պենտէկոստէի օրերը լրացան, ամենքը **միաբան**
**մէկտեղ էին:** 2 Եւ հանկարծակի երկնքից մի հնչիւն եղաւ՝ **սաստիկ փչող**
**քամու պէս,** եւ լցրեց բոլոր տունը՝ ուր նստած էին: 3 Եւ երեւացին նորանց

բաժանուած լեզուներ ինչպէս կրակից. Եւ նստեց նորանց ամեն մէկի վրա: 4
Եւ ամենքը Սուրբ Հոգով լցուեցան, եւ սկսեցին ուրիշ լեզուներով խօսել,
**ինչպէս որ Հոգին** նորանց խօսել էր տալիս:

1. **Հոգեգալստի կրակի պահանջը՝ միաբանությունն է:**
   **The requirements for the Pentecost fires is to be one accord.**

2. **Սպասեք, որ քամին փչի:**
   **Expect the wind to blow.**

3. **Լցվել Սուրբ Հոգով և հնազանդ լինել Նրան:**
   **To be filled and to be yielded to the Holy Spirit.**

4. **Բացենք մեր բերանները և հռչակենք Աստծո խոսքը:**
   **Open up our mouths and declare the word of God.**

**«Դարձեք կրակոտ և եռանդուն, և մարդիկ մղոններ կանցնեն, որպեսզի գան և տեսնեն, թե ինչպես եք դուք վառվում»: Ջոն Վեսլի**

**Աստված չի սիրում եկեղեցական կառույցներ. Նա սիրում է անհատների, ինչպես Պենտեկոստեի օրը: Աշակերտներից ամեն մեկն անհատապես բռնվեց կրակով. հենց դրանից կազմվեց կրակոտ եկեղեցին:**

**Ղև. 6:12 -** 12 Եւ սեղանի վրայի կրակը նորա մէջ վառած պիտի լինի, պիտի չհանգչի. Եւ քահանան ամեն առաւօտ նորա վրա փայտեր այրէ, եւ ողջակէզը նորա վրա շարէ եւ այրէ նորա վերա խաղաղութեան զոհերի ճարպը:

## ԱՄՓՈՓՈՒՄ

I. **REFINERS FIRE.**

II. **REVIVAL FIRE.**

III. **PENTECOST FIRE.**

# ԵՂԵՔ ՕՐՀՆՎԱԾ

**Եղեք օրհնված Աստծո գերբնական իմաստությամբ և հստակ առաջնորդությամբ ձեր կյանքում:**

**Եղեք օրհնված ստեղծարարութամբ, խիզախությամբ, կարողությամբ և առատությամբ:**

**Եղեք օրհնված ինքնավերահսկողությամբ և ինքնակարգապահությամբ:**

**եղեք օրհնված հրաշալի ընտանիքով, լավ ընկերներով և լավ առողջությամբ:**

**Եղեք օրհնված հավատքով, բարեհաճությամբ և բավականությամբ:**

**Եղեք օրհնված հաջողությամբ, գերբնական ուժերով, առաջ խաղացմամբ և աստվածային պաշտպանությամբ:**

**Եղեք օրհնված հնազանդ սրտով և դրական հայացքով կյանքին:**

**Եղեք օրհնված քաղաքում և երկրում, ներս մտնելիս և դուրս գալիս:**

**Ցանկացած բացասական խոսք, որը երբևէ ասվել է ձեր մասին, հենց հիմա քանդված է:**

**Այն ամենը, ինչին կդիպչի ձեր ձեռքը, կբարգավաճի և կհաջողվի: Եղեք օրհնված Հիսուսի Անունով:**

1. July 5 – July 14, 2017 (Tentative)
   Humanitarian/Evangelism/Outreach/VBS Trip

2. Friday Bible Study — S11, Water turned into wine; cleansing the Temple; Nicodemus: being born again.

3. Tuesday Prayer — S4

4. Home Groups —
5. Sunday MLK Service — 5:30 at Capital/ Monday Walk
6. Marin's Birthday